
ԱՂԲՅՈՒՐ



ՊԻՈՆԵՐ 2025.3

ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր

Հրատարակիչ՝
«ԱՂԲՅՈՒՐ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ» ՍՊԸ,
վկայական՝ 02Ա 050591
Լույս է տեսնում 1923 թվականից
Վկայական՝ 1174
Գրանցման համար՝ 286.110.04218
Հեռ. 091 59 38 13
Էլ. հասցե. aghbyur@yandex.ru
Կայք. www.aghbyur.com

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ. №3. 2025

ԱՐԹՈՒՐ ԱՐԱՐԱՏԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ 2
Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ. Հավերժական զրուցակիցներ. ՉԱՐԵՆՑ 5
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ 8, 13, 16, 23, 28
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԵԾԵՐԻՑ 10
ՍՊԱՐՏԱԿ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ. Ճանապարհ պատմության միջով . 11
Վ. ԽԱՐԱՉՅԱՆ. Դուն ինձ չե՞ս մոռնալ 14
Հետաքրքրասերի էջ 20
Ա. ԵՂԻԱՅԱՆ. Հայերենի դասեր 25
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ 30
ԲԱՌԱՇՂԹԱ 31

Համարում տողադարձերը կատարվում են համակարգչային ծրագրի օգնությամբ, և հնարավոր են սխալներ:

Գլխավոր խմբագիր՝
ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ

Շապիկին՝
դիմերեսին՝ **ՍՈՖԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, 8 տ.**
ՆԱՄ
դարձերեսին՝ **ԱՐՏԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ, 8 տ.**
Իրինդ գյուղի նկարչական խմբակ

ԱՐԹՈՒՐ ԱՐԱՐԱՏԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Պատերազմի տարիներին էր ծնվել Տավուշի մարզի Բաղանիս գյուղում ու երազում էր դառնալ զինվորական: Ու դպրոցն ավարտելուց հետո բարձր գնահատա-



կաններով ընդունվեց Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա: Ավարտելուց հետո նշանակվեց Վայքի մարզի զորամասերից մեկում ծառայության,

բայց ողջ ուշադրությունը Արցախն էր. ուզում էր Արցախում ծառայել, թեև մայրը մտահոգվում էր ու ասում, որ Արցախում ծառայությունը շատ վտանգավոր է: Բայց հինգ տարուց հետո Արթուրը արդեն Ջրականում էր՝ որպես հրամանատար: Եթե Ջրականը տանը մի քիչ մոտիկ լիներ, մինչ կյանքիս վերջը Ջրականում էլ կծառայեի՝ ասում էր նա: Ցավոք, նրա կյանքը ընդհատվեց 44-օրյա պատերազմի ժամանակ, ու նա՝ մայոր Արթուր Ալավերդյանը, իրոք, մինչև իր կյանքի վերջին վայրկյանը ծառայեց այնտեղ: Խիզախ էր ու սառնասիրտ, բայց միշտ իր մասնագիտական կարողությունների, հմտությունների վրա էր հենվում. սա են հիշում նրա մարտական ընկերները՝ Արմեն Համբարձումյանն ու Էդուարդ Համբարձումյանը: «Երևում էր, որ կրթված սպա է, խոսքը շատ կոնկրետ էր, կարճ, բայց բովանդակալի»,- հիշում է Էդուարդը: «Արթուրի հանդարտությունը, հանգստությունը գալիս էին իր գիտելիքներից, իր մարդ տեսակից»,- շեշտում է Արմենը: Էդուարդը լրացնում է. «Ուժեղ տղերքը թե՛ պատերազմի ժամանակ են նույնը, թե՛ կենցաղում, թե՛ ծառայության ժամանակ: Արթուրը բոլոր իրավիճակներում նույնն էր, տարբերություն չկար նրա համար, հասարակ, բայց ընկերասեր»:

Երբ սկսվեց պատերազմը, Արթուրը տանն էր, արձակուրդում էր:



Քննություններից գերազանց գնահատականներ էր ստացել, բայց երբ պատերազմը սկսվեց, անմիջապես վերադարձավ ծառայության վայր, որպեսզի իր մարտկոցի հետ լինի: Բարձրանալով դիրքեր՝ որոշ ժամանակ անց մարտկոցը ընկնում է շրջապատման մեջ, սակայն Արթուրի հանգստությունն ու սառնասրտությունը օգնում են նրան, որ մտածված զորաշարժով կարողանա իր տղաներին դուրս բերել շրջապատումից: Ամեն օրվա երեկոյան կապվում էր տղաների հետ, հուսադրում, որպեսզի ոչ ոք չընկճվի, ամեն ինչ լավ է լինելու, ու Աստծու հաջողությամբ այդ գիշերն էլ են լուսացնելու և միմյանց նորից տեսնելու: Ծնողների հետ էլ խոսելիս հանդարտ խոսքով համոզում էր չանհանգստանալ: Իսկ նրան նոր պաշտոնի էին նշանակել, ու նա այնպիսի հմտությամբ էր ղեկավարում մարտական գործողությունները, որ չէր զգացվում, որ մի քանի օր առաջ է նշանակվել: Ամեն վայրկյան Արթուրը զինվորի



կողքին էր: Թեժ մարտի օրն առաջինը վիրավորվեց Էդուարդը: Արթուրը նրա կողքին էր: Էդուարդը զգուշացրեց, որ թշնամու դիպուկահար է աշխատում, բայց մի քանի վայրկյան անց թիրախում Արթուրն էր: Ու դեռ մեկ րոպե էլ չէր անցել՝ մյուս դասակի հրամանատարը նույնպես զոհվեց: Մոտ մեկ րոպեի ընթացքում երեք սպաներ զոհվեցին: Չոհվեցին զենքները ձեռքներին: Ընկերները հրաժարվում են ընդունել այն իրողությունը, որ Արթուրը չկա: «Իրականում նա ոչ թե մեր հիշողության մեջ կա, այլ գիտակցության և մեր սրտերում»,-ասում է Էդուարդը:

Արթուր Արարատի Ալավերդյան, ծնվել է 1992թ. Տավուշի մարզի Բաղանիս գյուղում: Ավարտել է Երևանի հ. 59 միջն. դպրոցը, մասնակցել է նաև ապրիլյան պատերազմին, զոհվել է 44 օրյա պատերազմի մարտերից մեկի ժամանակ՝ հոկտեմբերի 22-ին, միայն մեկ օրվա մեջ իր ճիշտ կողմնորոշվելով և ճիշտ հաշվարկով վերացրել է թշնամու մի քանի տասնյակ զրահատեխնիկա և մոտ 1500 կենդանի ուժ, փրկել է բազմաթիվ կյանքեր, իր կռվելու ողջ ընթացքում խոցել է մոտ 200 զրահատեխնիկա:

Մայոր Արթուր Ալավերդյանը հետմահու պարգևատրվել է **ՄԱՐՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** և **ԱՐԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** մեդալներով:

Հ. 59 դպրոցի դասասենյակներից մեկն անվանակոչվել է մայոր Արթուր Ալավերդյանի անունով:



ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԶՐՈՒՅԱԿԻՑՆԵՐ

Շարքը պատմում է հանրահայտ ստեղծագործությունների մասին, և հույս ունենք, որ օգնում է ձեզ, սիրելի՛ դպրոցականներ, ընթերցելու գրքեր ընտրելու հարցում: Նախորդ համարներում ներկայացրել ենք **Ջ. ՍՎԻՖԹԻ «ԳՈՒԼԻՎԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**, **Ֆ. ՌԱԲԼԵԻ «ԳԱՐԳԱՆՏՅՈՒԱ ԵՎ ՊԱՆՏԱԳՐՅՈՒԵԼ»**, **Մ. ՍԵՐՎԱՆՏԵՍԻ «ԴՈՆ ԿԻԽՈՏ»**, **ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»**, **ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵԻ «ԲԱՆԱՍՏԵՂԾԸ»** հեքիաթը, **ՖԻՐԴՈՒՍՈՒ «ՇԱՀՆԱՄԵ»** երկը, **ՌԵՅ ԲՐԵԴԲԵՐԻԻ «451*՝ ԸՍՏ ՖԱՐԵՆՀԱՅԹԻ»** և այլ ստեղծագործություններ:

Այժմ՝ **Ե. ՉԱՐԵՆՑ. «ԱՔԻԼԼԵ՞Ս, ԹԵ՞ ՊՅԵՐՈ»:**

Բռնապետական երկրներում, չնայած գրաքննությանը, հեղինակները, այնուամենայնիվ, կարողանում էին ասել այն, ինչ ուզում էին: Ճիշտ է, հանդգնությունը հաճախ պատժվում էր, բայց գրողը չէր կարող լռել: Դիմում էր տարբեր հնարքների ու արտահայտչամիջոցների, միայն թե ասելիքը տեղ հասցներ: Եղիշե Չարենցի **«ԱՔԻԼԼԵ՞Ս, ԹԵ՞ ՊՅԵՐՈ»** ինտերմեդիան (թատերգություն, որ խաղարկվում է ներկայացման ընդմիջումներին) ամբողջովին այլաբանություն է: *Հերո՞ս, թե՞ խեղկատակ:* Հարցադրումն իսկ շատ բան է հուշում:


Հանդիսականները դիտել են Մեծ Հեղինակի երկի երեք արարները: Դրանցից երկուսն են նրա գրչին պատկանում: Թատրոնի Տնօրենը ցանկանում է լսել հանդիսականների կարծիք. կա՞ արդյոք որևէ թերություն երրորդ արարում: Դահլիճի հիացական բացականչությունները հաստատում են, որ ամեն ինչ հոյակապ էր: Միայն մեկ-երկու կերկերուն ձայներ են փորձում ասել, որ թերություններ, այնուամենայնիվ, կային: Սակայն այդ կերկերուն կասկածները խլացնում են դահլիճից լսվող բազմաթիվ բացականչություններ. ամեն ինչ շքեղ էր:

Քանի որ ամեն ինչ արդեն Տնօրենի ուզածով էր ընթանում, նա

տեղեկացնում է, որ երրորդ արարը սկսելու պահին հայտնվել է մի «ֆանտաստիկ» պարոն, որը, ներկայանալով որպես կենտրոնական գործող անձ, ասում է, թե ինչ-որ մեկը ջնջել է իր դերը.

Եվ խոսքերով իր այդ,
Ինչպես տեսնում եք պարզ –
ակնարկում է նա ինձ...

Տնօրենը սկսում է համոզել, որ Հանճարեղ Հեղինակը այդպիսի հերոսներ չունի և հենց դրանով է տարբերվում Սոֆոկլեսից, Շեքսպիրից ու մյուս հեղինակներից: Տնօրենը հարցնում է, թե կա՞ն դահլիճում մարդիկ, ովքեր հավատում են **«Ֆանտաստիկ»** հերոսին: Դահլիճում լռություն է տիրում, բայց երբ հարցը հնչում է երրորդ անգամ, բեմ է բարձրանում մի տարիքոտ հանդիսական և ասում, որ ինքը Տնօրենի սեղանի վրա տեսել է ձեռագիրը: Իսկ այդտեղ կար Կենտրոնական հերոսը: Քանի որ Տնօրենը փոխել է ձեռագիրը, նա պահանջում է, որ Հերոսը գա ու ներկայանա դահլիճին:



Բայց դահլիճի վրա հույս դնելը, պարզվում է, միամտություն է: Մեծ մասը հավանություն է տալիս Տնօրենին: Ոմանք էլ ոչինչ չեն հասկանում կատարվածից: Աչքերը թարթող մի հանդիսական սիրում է լուսին ու խարույկ: Մի կանացի ձայն էլ ինքնամոռաց ասում է, որ ինքը սիրում է հերոսների գանգուր մորուսը...

Թատրոնի Տնօրենը լավ գիտի անելիքը: Նախքան Հերոսի գալը բեմ է հրավիրում երկու գործող անձանց, ովքեր երկինք են հանում Տնօրենին, նրա հասցեին հնչած քննադատությունը համարում բամբասանք ու հերյուրանք: Նրանց ասածներին դահլիճն արձագանքում է բուռն, երկարատև ծափահարություններով ու բացականչություններով՝ փառք ու պատիվ մեծ Տնօրենին:

Վերջապես բեմ է հրավիրվում բարձրահասակ Հերոսը կամ Գլխավոր Անձը: Նրա համոզմամբ՝ Հեղինակը իր հին ու նոր երկերում երբեք չի կերտել անգույն, դիմազուրկ կերպարներ: Հենց դրանով է նա տարբերվում մյուս ողբերգուներից: Մինչդեռ Վարպետի ձեռագիրը փոխվել է: Բեմում ամբողջովին աղավաղված գործողություններ են պատկերվում.





Մարդկային մի հոծ, անդեմ
բազմություն,
Որ չնչին, գաճաճ առաջնորդների
Ղեկավարությամբ, անիմաստ
ու կույր,
Ինչպես մի նախիր – գնում է
անմիտ,
Ինքն էլ չգիտե, թե ինչու՞ և ու՞ր...

Հերոսը ցավ է զգում, որ չկան Աքիլլեսի կամ Այաքսի պես հերոսներ, և Հեղինակի Հերոսական երկը դարձել է ֆարս՝ զավեշտախաղ: Բայց դահլիճին արդեն անհնար է որևէ բան ապացուցել: Հանդիսականների մեծ մասը կամ ծաղրում է, կամ պահանջում հեռացնել Հերոսին: Պարտությունն ակնհայտ է: Հերոսը, դիմելով հանդիսականներին, նրանց համոզելու մի վերջին փորձ է անում.

Չէ՞ որ դասական մի ողբերգության
Մուտքի համար եք դուք տոմսեր
առել –
Եվ ոչ թե չնչին մի ֆարսի համար...

Բայց Տնօրենի շնորհիվ դահլիճն արդեն կուլ է տվել ձեռագրի աղավաղումն ու մարսել և լիովին պատրաստ է ֆարս դիտելու: Հերոսին ոչնչացնելու համար Տնօրենին մնում է անել վերջին քայլը: Ի վերջո, ինտերմեդիան պետք է լիարժեք լինի: Գլխավոր Անձին նա մեծահոգաբար դեր է առաջարկում, բնականաբար, ոչ թե հերոսի՝ Աքիլլեսի, այլ խեղկատակի՝ Պյերոյի: Բեմ է ելնում մի գանգրահեր տղա ու խրոխտ ձայնով երգ հնչեցնում խեղկատակի մասին: Դահլիճը ոգևորությամբ ձայնակցում է: Իսկ հերոսին ոտնատակ է տալիս Առաջնորդի բանակը:

Չարենցն այս երկը գրել է չորս տարում՝ 1929-1933 թվականներին: Նա պատկերում էր այն, ինչ զգում ու տեսնում էր, ինչը հետո պիտի ամփոփվեր արյունոտ ու սև մի տարեթվի մեջ՝ 1937: Այդ հիմա է ամեն ինչ հասկանալի, իսկ հեռավոր այն տարիներին դահլիճը սովորաբար լռում էր կամ արձագանքում բուռն ու երկարատև ծափահարություններով: Ակնարկները ավելի քան թափանցիկ են: Այնպես որ՝ այլաբանությունը մեկնության կարիք չունի:

ԱՐԹՈՒՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ

«Նարեկացի» արվեստի միության նկարչական խմբակի սաները

Ղեկավար՝ ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ



ԱՐԵՆ ԽՈՅԵՑՅԱՆ
7 տ.



ԱՐԻՆԱ ԴԱՎԹՅԱՆ
13 տ.



ԱՐՓԻ ՍԱՐԳՍՅԱՆ
8 տ.



ԱՖԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
8 տ.



ԵՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
4 տ.



ԼԻԶԱ ՊՈՂՈՍՅԱՆ
7 տ.



ԼՅՈՒՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
4 տ.



ԿԱՐԵՆ ՍԱՐԳԻՍՈՎ
7 տ.



ՀՈՎՍԵՓ ՄԱՆՎԵԼՅԱՆ
11 տ.



ՄԱՐԻԱՄ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
11 տ.



ՄԱՐԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ
11 տ.



ՆՈՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
13 տ.



ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ
8 տ.



ՍԱԹԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
8 տ.



ՍՈՒՐԵՆ ԴՈՒՐՅԱՆ
8 տ.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՀԱՅ ՄԵԾԵՐԻՑ

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ
(1865-1927 թթ.)

«Ես իմ կյանքում երբեք չեմ ձըգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի և պայքարել



եմ միայն մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության և բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում»:

«Որպեսզի թշնամիքդ քեզ հարգեն՝ պատժիր ազգիդ դավաճաններին»:

«Դուք հաշտվեցաք թուրքերուն հետ, բայց ինձ թույլ տվեք անհաշտ մնալու, ես թուրքի հետ չեմ կրնար հաշտվիլ մինչեւ իմ մահը: Բայց ես ձեզ գուշակություն մը կուզեմ ընել եւ կուզեմ որ լսեք: Եթե այս հեղափոխական կոչված թուրքերը օր մը ձեզ չի կախեցին, ես մարդ չեմ: Օր պիտի գա, որ այս հեղափոխականներն ալ պիտի դառնան Սուլթան Համիտի պես գազան մը եւ բոլորիդ ալ պիտի հոշոտեն...»:

Հայոց ԶՈՐԱՎԱՐ

Անդրանիկ Թորոսի Օզանյան



ՍՊԱՐՏԱԿ ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆ

ՀԱՆԳԱՐՀ
պատմության միջով

…Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու բակում արևխանձ դեմքով մի մարդ մոտեցավ մեզ.


- Տեսնու՞մ եք՝ ինչ հոյակապ կառույց է:

- Փառահեղ է, - հաստատեցի ես, ու զգալով, որ նա հենց այնպես չի մոտեցել մեզ, հարցրի,- դուք երևի վերականգնող վարպետների՞ց եք…

- Առաջին օրվանից այստեղ եմ, մնալու եմ, մինչև վերջին քարը դրվի:

Ծանոթացանք. Վոլոդյա Բաբայանն էր՝ փլատակներից մեր քա-





րե հիշողություններին հարություն տվող վարպետը:

- Երևի արմատով շուշեցի եք, որ այսքան պինդ եք կպել այս հող ու քարին:

- Չէ, մշեցի եմ,- նրա աչքերում մի հեռավոր ու անհասանելի կարոտ կար. երևի պապերի Մուշն ու Սասունը արթնացան նրա արյան մեջ…

Ասենք ե՞րբ է այդ կարոտը ննջում որ…

Վոլոդյան մեզ առաջնորդում է վերականգնվող եկեղեցու ներսն ու առանց զլանալու պատմում.

«Շնորհիվ եւ ողորմութեամբ ամենազորին Աստուծոյ կառուցեալ հրաշակերտ եւ բարեպաշտ ի ժողովրդեանց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցուն Ղազանչեցոց Շուշի քաղաքիս, որոյ շինությունն սկսեալ ի 1868 ամի… ավարտեալ ի 1887 ամի…»:



Ես միշտ իմ երևակայության մեջ ստեղծել եմ միջնադարյան վարպետ կառուցողի կերպարը, ի՛նչ իմանայի, որ այն ես գտնելու եմ քսանմեկերորդ դարի շեմին իմ նախնիների Շուշի քաղաքում…

Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցու բակում հանգստարան կա: Իտալական սև մարմարից տապանաքարը առանձնանում է մյուսներից.

«Թադէոս Բաբայեան Թամիրեանց

Ծնեալ 1832 եւ վախճանեալ 1899 8 դեկտեմբերի ի Շուշի»:

Քաղաքն իր մշուշված հիշողության մեջ անգամ անկարող է մոռանալ նրան: Թադևոս Թամիրյանցը իր հարստությունը ներդնում է լեռնաբուխ աղբյուրների սառնորակ ջուրը հարազատ քաղաք հասցնելու համար: Գերմանիայից հրավիրված մասնագետին մեծահարուստ հայի նախաձեռնությունը անիրագործելի է թվում: Ասում են՝ լեռներից մինչև Շուշի ձգվող ճանապարհին՝ մոտ 18 կմ, որտեղով նախատեսվում էր անցկացնել ջրատար խողովակները, Թամիրյանցը ամեն մետրի համար մի ոսկի է ծախսել…

1896 թվականի սեպտեմբերի 8-ին մեծ բազմության ներկայությամբ քաղաքի իշխանությունները հանդիսավորությամբ մեծարեցին Թամիրյացնին, որի միջոցներով կառուցված ջրատարը պարսպից ներս մտավ քաղաք՝ իր հետ բերելով կենարար ջուրը. պատմում է **«ԿՈՎԿԱՍ»** թերթը 1896թ. 249 համարում:

Շուշիից վերադարձի ճանապարհին իմ օրվա առավոտյան հանդիսավորության մեջ մի տեսակ տխրություն կար շաղախված. այս հանդիպմանը ես սպասել էի իմ ծննդյան օրից… Հորեղբորս նկարագրած մեր տան տեղը բազմահարկ մի շինություն էր թառել…

Վերադառնում էի, ու Համո Սահյանի մի բանաստեղծություն էր հույսի ու մխիթարանքի պես արթնացել հիշողությանս մեջ.

Ձյուներդ ՀԱՅԵՐԵՆ են լալու,
Գարունդ ՀԱՅԵՐԵՆ է գալու,
ՀԱՅԵՐԵՆ են գալու դարերդ…

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ



ՎԱՀԱՆ ՍՈՄՋՅԱՆ
Լոս Անջելես, 7 տ.














ՎԱՐԴԱՆ ԽԱՐԱՉՅԱՆ

Դուն ինչի՞ չե՞ս մոռնար...

Լոս Անջելես-Ֆրեզնո ճանապարհի մի հանգրվանում, երբ սառը սուրճ վերցրինք և մեքենային հենված՝ խմում էինք, նա ինձ հարցրեց.



- Երբ մեռնիմ՝ ինձ կհիշե՞ս, մի բան կգրե՞ս իմ մասին...

- Էհ,- ասացի ես,- դու դեռ չես մեռել և իմ կարծիքով՝ չես էլ մեռնելու, բայց ես ֆեյսբուքում արդեն լիքը բան ունեմ գրած քո և իմ մասին...

- Հա, բայց ես կուզեմ իմանալ՝ երբ մեռնիմ, դու կհիշե՞ս ինձ, բան մը նորեն կգրե՞ս իմ մասին...

- Կգրեմ, թե չեմ գրի՝ եթե դու արդեն մեռած լինես, մի՞թե դա այլևս կհուզի քեզ... Չէ՞ որ մեռածները ոչինչ չեն իմանում... Չէ՞ որ նրանք վերջապես արդեն թքած ունեն ապրողների վրա՝ կհիշեն նրանք իրենց, թե չեն հիշի...

- Դա էդպես չի,- ասաց իմ ութսուն տարեկան ընկեր Սարգիս Վարդանյանը,- ինձ համար շատ կարևոր է, որ դու ինձ հիշես, հիշես այս օրը, հիշես որ ես և դու սլացել ենք արևոտ մի օր այս ֆրիվեյով դեպի Ֆրեզնո՝ քո ընկեր Վիլյամ Սարոյանի մոտ, թեպետ ես գիտեմ, որ նա այլևս չկա, իսկ դու ինձ ստիպում ես մեքենան վարել դեպի Ֆրեզնո, իբր նա կա, իբր սպասում է քեզ իր այգում՝ ծիրանիների տակ տխուր նստած... Ես ուզում եմ, որ երբ ես չլինեմ՝ դու ինձ ևս այդպես կարոտես ու որոնես...

- Անպայման կհիշեմ... - ասացի ես նրան,- Չուզեմ էլ՝ կհիշեմ, ախր ո՞ւր պիտի ես փախչեմ, ախր ո՞ւր...

Մենք նորից նստեցինք «լեքսիուսը»՝ Սարգիսի իննսունական թվականների հինավուրց, բայց զորեղ այդ մեքենան, և սլացանք Կալիֆոռնիայի ամայի ֆրիվեյով դեպի Ֆրեզնո՝ Վիլյամ Սարոյանի մոտ, ով վաղուց այլևս չքացել էր այս աշխարհից, բայց ոչ մեր հիշողությունից... Ես համոզել էի Սարգիսին, որ Վիլլին սպասում է մեզ Ֆրեզնոյում, որ անհնար է՝ նա մահանա՝ առանց իմ ու իր երես երեսի հանդիպման...



Մենք շրջեցինք ողջ Ֆրեզնոն, քշեցինք բոլոր փողոցներով, բայց Վիլյամ Սարոյանին այնտեղ չգտանք... Ոչ մի տեղ չգտանք... Նա փաստորեն իսկապես մահացել էր և չքվել այս երկրի երեսից, ինչն անհավատալի էր ինձ համար, երբ նույնիսկ ետ վերադարձանք Բըր-Բանկ... Իհարկե, ես գիտեի, որ Սարոյանը մահացել է դեռ շատ վաղուց, Երևանի Պանթեոնում ես ներկա էի նրա սրտի թաղմանը, բայց մի՞թե մարդիկ կարող են այնպես մեռնել, որ այլևս ոչ մի տեղ չգտնես նրանց. ես դրան մինչև հիմա չեմ հավատում, ուղղակի նրանք թաքնվում են մեզնից մի այլ տեղանքում, մի այլ վայրում, ինչպես երեխաները պահմտոցու ժամանակ... Ու վերջը, մեկ է, մենք գտնելու ենք նրանց, գտնելու ենք նրանց...

Սա գրեցի քեզ համար, իմ մեռած ընկեր, Սարգիս Վարդանյան, իմ թանկ ընկեր, ամերիկյան ահավոր տագնապների իմ նեղության ընկեր, ես քեզ երբեք չեմ մոռանա, և իմ ու քո Աստվածը մեր ընկերությունը չի մոռանա... Եթե նույնիսկ բոլորը մեզ մոռանան, Նա մեզ չի մոռանա, եթե բոլորն անգամ մեզ ուրանան, Նա մեզ չի ուրանա... Իմ պայծառ ընկեր Սարգիս Վարդանյան, ես հիշում եմ ֆրիվեյը, հիշում եմ Ֆրեզնոն, բայց ամենից շատ հիշում եմ քո այն խոսքը, երբ Լոս Անջելես-Ֆրեզնո ճանապարհի մի կեռմանում սառը սուրճ խմելիս դու ինձ հարցրիր՝ երբ ես մեռնեմ, ասա ինձի՝ դու ինձի կհիշե՞ս... Դուն ինձի չե՞ս մոռնար... Դուն ինձի կկարոտե՞ս... Ասա ինձի...

«ՁՄԵՌՎԱ ԱՐԵՎ»

Ցուրտ ձմեռ, սառույց ու բուք,
Սուլում է սառը քամին,
Եվ կրակի մոտ տաքուկ
Դեռ մրսում է իմ հոգին:
Ցուրտ է դրսում, փոթորիկ,
Տանը կրակ է վառվում,
Իսկ ես, դրսից թեև տաք,
Բայց դողում եմ իմ հոգում:
Սրտումս բուք, փոթորիկ,
Երբ հեռու ես ինձանից,
Բայց երբ գալիս ես ինձ մոտ,
Կենդանանում եմ նորից:
Քո ջերմ, պայծառ ժպիտով
Դու ջերմացնում ես հոգիս
Ու քո այդ տաք հայացքով
Հալում սառույցը սրտիս:
Ու թեև ցուրտ է դրսում,
Բայց չեմ մրսում քո կողքին,
Երբ վառ արևի նման
Ջերմացնում ես օրը իմ:

ՀՈԳՈՒՍ ՄԵՋ ԻՐԱՐԱՆՑՈՒՄ

Հոգուս մեջ՝ իրարանցում,
Ես չեմ հասկանում ոչինչ,
Դու նստած ես իմ սրտում,
Մտքիցս դուրս չես գալիս:
Երբ կանգնում եմ քո կողքին
Սիրտս լցվում է սիրով,
Ու բերկրանքն է իմ սրտին
Տիրում իր ողջ հմայքով:
Բայց դատարկ է սիրտը քո
Կամ գուցե ոչ, չգիտեմ,
Սառն ես ընդդեմ իմ սիրո,
Կարծես փակվել ես իմ դեմ:
Հոգուս մեջ՝ իրարանցում,
Ներսումս՝ ծով ալեկոծ,
Խելագար ալիքներում
Տառապում եմ քո սիրուց:

ԱՐԵՎԻ ՇՈՂԵՐԻ ՏԱԿ

Արևի շողերի տակ,
Թե լուսնի լույսի ներքո
Կսիրեմ ես անդադար
Աստղի պես աչքերը քո:

Աստղազարդ երկնքի տակ,
Ջութակի երգի ներքո
Կսիրեմ ես անդադար
Այն ցանկալի ձայնը քո:

Թե վարար անձրևի տակ,
Թե մեղմիկ քամու ներքո
Կսիրեմ քեզ անդադար
Ու կպահեմ սերը քո...

ՆՈՐ ԷՋ

Ուշ աշուն, շուտով ձմեռ,
Տեղում է ձյունն առաջին,
Վերջին հանդիպումն էր մեր,
Խոսակցությունը վերջին:

Կյանքը թվում էր պայծառ,
Բայց ձյունն եկավ ու ջնջեց
Այն ամենը, ինչ որ կար,
Ինչ որ եղել էր մեր մեջ:

Մտերիմ էինք, բայց ավա՛ղ,
Տառապելով հուշերից,
Կարծես անծանոթ իրար,
Հեռացել ենք իրարից:

Ինձ կհանես քո սրտից,
Թե կպահես մինչև վերջ,
Քեզ ջնջում եմ իմ կյանքից
Ու բացում եմ մի նոր էջ:

ԱՆՁՐԵՎԻՑ ՀԵՏՈ

Անձրևից հետո դուրս եկա
մեր բակ՝
Ձբոսնելու դեռ թաց գետնի վրայով,
Շնչելու հոտը անձրևի խոնավ
Ու ազատության բերկրանքն
զգալու:

Թափվում էին դեռ կաթիլներ
բարակ,
Ընկնում իմ ճերմակ
վերնաշապիկին,
Հանգիստ էի ես, հանգիստ ու
խաղաղ
Այդ անձրևային մեղմ երեկոյին:

Սակայն թաց ու լուռ փողոցի եզրին
Միայնակ վառվող լամպի լույսի
տակ
Ես նկատեցի քո ուրվականին,
Որը կանգնած էր առանց ինձ՝
մենակ:

Եվ գիտե՞մ, ուղիղ մեկ տարի առաջ
Այս նույն փողոցի նույն լամպի
տակին,
Երբ կարծես գտել էի սերը իմ
կորած
Անհայտ պատճառով մենք
բաժանվեցինք.

Ես հեռացա, իսկ... իսկ դու մնացիր,
Արցունքն աչքերիս հորդ անձրև
դարձավ,
Դու, մենակ կանգնած այն լամպի
տակին,
Աչքիս առաջին ուրվական
դարձար...

ՆԱՐԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ
Երևան, Հայ-չինական
բարեկամության դպրոց,
10-րդ դաս.

ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆ

Մինաս Ավետիսյանի անվան կերպարվեստի դպրոցի սաները

Ուսուցիչ՝ ԵԼԵՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ
Տնօրեն՝ ԱՐՄԻՆԵ ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆ



ՄԵՐԻ ԱՍԼԱՆՅԱՆ
15 տ.



ՄԱՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ
14 տ.



ԵՎԱ ԲԱԲԱՅԱՆ
13 տ.



ՌՈՒԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
12 տ.



ՄԱՐԹԱ ԿԻՉԻԼԿՈՒՉՅԱՆ
15 տ.



ԱՆԻ ՊԱԼԱՑՅԱՆ
12 տ.



ՄԱՐԻԱ ՍԱՀԱԿՅԱՆ
12 տ.



ԿԱՄԻԼԱ ՊՈՂՈՍՅԱՆ
13 տ.



ՍՅՈՒԶԻ ՍԱՀԱԿՅԱՆ
14 տ.

ՀԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հել Մարգարյանի ներդրումը ավիացիայի մեջ

Հել Մարգարյանը հայկական ծագում ունեցող ականավոր ամերիկացի ավիակոնստրուկտոր է: Նրա անունը առնչվում է ավիացիայի պատմության մեջ նորագույն ռմբակոծիչներից մեկի՝ Northrop B-2 Spirit-ի ստեղծմանը և կարևոր դեր է խաղացել ավիացիայում գաղտնի տեխնոլոգիաների կիրառման մեջ:



Հել Մարգարյանը ծնվել է 1929 թվականին և, ինչպես իր սերնդի շատ ինժեներներ, վաղ տարիքից տարված է եղել ավիացիայով: Ինժեների և ավիակոնստրուկտորի իր գործունեությունն ավիացիոն արդյունաբերության մեջ նա սկսել է 1950-ականներին: Տարբեր ընկերություններում աշխատանքային փորձը նրան հնարավորություն է տվել բացահայտելու ոլորտի առանձնահատկությունները և կուտակելու բավարար գործնական և տեսական գիտելիքներ, որոնք հիմք են դարձել 70-ականների վերջի ամենակարևոր նախագծի համար:


1970-ականներին ավիակոնստրուկտորն աշխատել է Northrop ինքնաթիռաշինական ընկերությունում, որը դեռ 1940-ականներից իր շուրջն է հավաքում գործի սիրահարներին, նրանց հետ՝ նաև Հել Մարգարյանին: 1979 թվականին նա ընկերությանն է ներկայացրել նորագույն սերնդի ռմբակոծչի առաջին գծագրերը: Մարգարյանը ոգեշնչվել է 1940 թվականին ստեղծված Northrop-ի՝ ամբողջական թևով YB-49 ռմբակոծչի նախագծմամբ: Ավիացիոն կոնստրուկտորը վերամշակել է վաղ մոդելները և ավելացրել տարրեր, որոնք նախկինում երբեք ոչ մի տեղ չէին կիրառվել:

B-2 Spirit ռմբակոծիչը կամ, ինչպես այն պաշտոնապես կոչվում էր, Advanced Technology Bomber (ATB)-ը մշակվել է ժամանակակից հակաօդային պաշտպանության համակարգերը հաղթահարելու համար: Հել Մարգարյանի աշխատանքը հիմնված էր ավիացիայի ոլորտի այլ նախագծերի վերլուծության վրա: Անհրաժեշտ էր հաշվի առնել անցյալի մոդելների առավելություններն ու թերությունները: Նա ներմուծեց նաև առաջադեմ ցածր դիտարկելիության տեխնոլոգիաներ: Մարգարյանը նախագծել էր մի սարք, որը, ենթադրաբար, «անտեսանելի» էր ռադարների համար. ինքնաթիռը ծածկված էր ռադիոկլանող նյութերով և հիմնված էր «թռչող թևի» աերոդինամիկ դիզայնի վրա: Սա նշանակում է, որ այն չունի հիմնակմախք՝ ֆյուզելաժ, կամ պոչ: Հել Մարգարյանի նախագծած ռմբակոծիչը նախորդների նկատմամբ զգալի առավելություններ ուներ, քանի որ նորագույն տեխնոլոգիաները համատեղում էր բարձր աերոդինամիկ արդյունավետության հետ: B-2-ի մշակումը 1981 թվականի հոկտեմբերին նախագահ Ռոնալդ Ռեյգանի հայտարարած ռազմավարական արդիականացման ծրագրի (SMP) մի մասն էր: Ռազմավարական արդիականացման ծրագրով Northrop-ը շահեց Senior Ice անվամբ նոր ռազմավարական ռմբակոծիչ ստեղծելու պայմանա-



գիրը: Մարգարյանը ղեկավարեց այս հավակնոտ նախագծի վրա աշխատող թիմը:

B-2 նախագիծը դարձավ ավիացիայի պատմության մեջ ամենաթանկերից մեկը, որի համար 1979-ից մինչև 1989 թվականը ծախսվել է մոտ 23 միլիարդ ԱՄՆ դոլար: Ինքնաթիռն առաջին անգամ հանրությանը ներկայացվեց 1988 թվականի նոյեմբերի 22-ին ԱՄՆ ռազմաօդային ուժերի գործարանում՝ Պալմդեյլում՝ Կալիֆոռնիա: Առաջին ցուցադրական թռիչքը տեղի ունեցավ 1989 թվականի հուլիսի 17-ին: Մարգարյանը մահացավ 2012 թվականին՝ թողնելով նշանակալի ժառանգություն: Նրա ստեղծած B-2 ռմբակոծիչը մնում է ավիացիոն արդյունաբերության ամենաառաջադեմ և արդյունավետ ռազմավարական նախագծերից մեկը, սահմանեց նոր չափանիշներ ռազմական ինքնաթիռների նախագծման մեջ:



***

Չկարծես, թե ես
Արցունքներից սրվող
Անպաշտպան եմ՝
Քո մի հայացքից կախված:
Իմ լռության մեջ
Ամբողջ մի պատմություն կա՝
Չասված խոսքերով լի,
Որոնցից դու ես հյուսված:

Երբ նայես այլ մեկի
Նույն քնքշությամբ,
Գուցե չարտասվեմ,
Բայց հոգուս խորքում
Անտեսված ցավս
Անծանոթ կդառնա ինձ:

Գիտե՞ս՝ ինչ կանեմ...
Ես լուռ կհեռանամ՝
Քեզ թողնելով անցյալում,
Ու քո ստվերը
Այլևս չի փայլի
Իմ ներքին խաղաղության մեջ...

ԱՆԼՌԵԼԻ ԿԱՐՈՏ

Իմ սերը խոսել չգիտի,
Բայց կարոտս գոռալ գիտի,
Գիտի երգել ու միշտ խոսել,
Սպասել քեզ հավերժ:

Իմ կարոտը բառեր չունի,
Բայց ունի շունչ ու ոգի,
Ունի պոեմներ ու վեպեր,
Ունի հավերժ գոյություն:

Իմ կարոտը տրտնջալ չգիտի,
Լուռ սպասել այն գիտի,
Գիտի համբերատար լինել,
Լինել հավետ, առանց բառերի:

Իմ կարոտը լացել գիտի,
Բայց չի լացի այն երբեք
Կմրմնջա, կփսփսա,
Բայց հեռու չի գնա նա:

ՊԱՏԳԱՄ

Ամպերի մեջ սերը ձուլենք՝
Սիրով լցված ոգեղեն,
Երկիրը մենք հզորացնենք՝
Երկնքից իջած հողեղեն:

Գիշերներում տխրության,
Որ ձանձրույթը չտիրի,
Վառենք լույսը աստղերի՝
Հմայքով անկրկնելի:

Երկնքում ուղիներ սփռենք,
Երկրում փնտրենք կյանք,
Փառքի ճամփով գնանք հեռու՝
Լինենք հավերժ երկրի ճամ-
փորդ:

Մեր սրտերը, սիրով լցված,
Մարդկանց առջև բաց անենք,
Կանաչով լցված աշխարհում
Խաղաղության լույս լցնենք:

ՔՆԱՐԻԿ ՀՈՒՆԱՆՅԱՆ
Գեղաքունիքի մարզ, Լանջաղբ-
յուրի միջն. դպ., 10-րդ դաս.

ԵՐԱԿՆԵՐԻՑ ՏԵՐԵՎՆԵՐԻ

Երակներից տերևների
Մի լուռ բառ է փախչում իր
տուն՝
Ինչ-որ հույսով, որ տեղ հասնի:
Երակներից տերևների
Ինչ-որ մեծ քարտեզ է բխում,
Ինչ-որ քարտեզ՝ իր նոր կյանքի:
Ամեն մի գիծ,
Ամեն երակ,
Ամեն մի շունչ այդ տերևի
Անցել է հուր, անցել կայծակ,
Բայց նա, թեև իր գույնը դառ,
Իր շունչը կես,
Իր տեսքը կես,
Իր կողքերից մասեր պոկած,
Ու ինքն էլ աղավաղված,
Կպչում է իր արմատներին,
Ու չի հարցնում ու բողոքում,
Ու չի գոռում ու հալածում,
Բայց լսում է ու ընդունում,
Լռում է ու միշտ հաշտվում:
Երակներից տերևների
Կամքն էր բխում ու ստիպում,
Երակներից տերևների
Լույս էր վառվում
Ու չէր մարվում:
Ու այդպես էլ տերևները
Իրենց երակների հետ միասին
Միշտ ծալվում էին ու սեղմվում,
Բայց չէին ճեքվում ու փշրվում:

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՈՒ ՄԻ ՇՈՒՆ

Թափառական մի մարդ կար,
Ով մի շան հետ էր քայլում:
Քայլելով հին փողոցներով՝
Նա հաց ու ջուր էր մուրում:
Իսկ շունը հեզ, կողքին վստահ,
Քայլում էր լուռ ու անկասկած՝
Վստահելով տիրոջը սառ:
Բայց փողոցով կյանք մուրալով՝
Ոչ մի կտոր շանը չկար:
Ու շունը բութ ու միամիտ,
Նայելով հացին, ջրին,
Հասկանում է անխիղճ մարդուն,
Ու նոր վախով ու մեծ սովով,
Լքում է նա մարդուն խռով:

ՄԻ ՓՈՔՐ

Մի փոքր երազ,
Մի փոքր կյանք,
Մի փոքր լույս,
Մի փոքր խավար,
Մի փոքր ամենից,
Մի փոքր ոչնչից,
Մի փոքր կորուստ,
Մի փոքր աճ,
Մի փոքր ամենից,
Մի փոքր ոչնչից,
Մի փոքր կյանքից
Ու շատ երազներից:

ԼԱՐԻՍԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կոտայքի մարզ, Արզականի միջն.
դպրոց, 8-րդ դաս.

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԵՐ

1. ԳՈՒՅ

Կը նշանակէ **ծունկ**, այսինքն՝ ոտքին ծալուող յօդը: Կ'ըսենք նաեւ՝ ծունր: Ֆրանսերէն՝ genou, անգլերէն՝ ***knee***: Գրաբարի մէջ շատ կենսունակ ու գործածական բառ մըն էր:

Այստեղ ունինք գուճ-ով կազմուած յարադրական շատ գեղեցիկ բայեր/ ասոյթներ, ինչպէս՝

--ի գուճս անկանիլ
--ի գուճս հարկանիլ
--ի գուճս իջանիլ
--ի գուճ կալ

Չորսն ալ կը նշանակեն ծունկի գալ, ծունր դնել, ծնրադրել, չոքիլ:

--ի գուճս սողալ

Ծունկերուն վրայ սողալով յառաջանալ:

Արդի հայը գրեթէ չի ճանչնար այս բառը, որ կը գոյատեւէ բառարանային փոխանցումներով:

Գրաբարը ունեցած է նաեւ գճել/ գճիլ կամ ընդգճել/ընդգճիլ բայերը եւս, որոնք կը նշանակեն ծունկի բերել եւ ծունկի գալ:

Ասոնց երկրորդը, ժամանակի ընթացքին կարգ մը հնչիւնափոխութիւններ կրելով, աշխարհաբար հասած է ընկճել/ընկճուիլ ձեւով: Գիտնանք սակայն, որ փոփոխութիւնը մի՛այն ձեւական չէ, այլեւ... բովանդակային:

Արդարեւ, այս բայերը կորսնցուցած են իրենց նիւթական նշանակութիւնը եւ վերածուած են վերացական հասկացութեան, ուր՝

--ընկճել չի նշանակեր ծունկի բերել, այլ՝ ***յաղթել***, ***տիրել***, ***իրեն ենթարկել***:

--ընկճուիլ՝ վհատիլ, ***ընկըճկիլ***, ***յոյսը կտրել/յուսահատիլ***, ***բարոյալքուիլ***:

Աշխարհաբարի ուսուցիչը, ուրեմն, պէտք է գիտնայ, որ այս երկուքին կուճ թուող արմատը պատմականօրէն հնչիւնափոխուած գուճ մըն է՝

ընդ-գուճ-ել > ըն-կուճ-ել > ընկճել

ընդ-գուճ-ուիլ > ըն-կուճ-ուիլ > ընկճուիլ

***

Միւս կողմէ՝ ներկայիս իրօք ունինք կուճ բառ մը, որ կը նշանակէ մարմար.

--«Քանդուեցան ձեր կուճով դամբարաններն Անիի» (Դ. Վարուժան):

2. ԿՌՈՒՆԿ ԵՒ ԱՐԱՓԻԼ





Կռո՛ւնկ, ուստի՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռու՛նկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Իմ տան մօտ ապրի՛ր, բարի՛ արագիլ,
Բո՛յն հիւսիր ծառին, բարդու կատարին:

Հայոց աշխարհի եւ հայ պանդուխտի երկու սիրելիներն են ասոնք:

***

Առաջին ակնարկով հաւանաբար քիչ մը դժուար ըլլայ պատկերի վրայ զանազանել հայուն ու Հայաստանին այնքան սիրած ու երգած այս երկու թռչունները: Մինչ Հայաստան բնակող հայուն համար շատ աւելի հեշտ է, քանի ան կ'ապրի այս երկուքին հարեւանութեան, երբեմն ալ մտերմութեան մէջ:

Այսուհանդերձ փորձենք:

Կռունկին վիզը աւելի նուրբ է եւ գլուխին հետ ուղիղ անկիւն կը ձեւացնէ:

Մինչ արագիլին վիզը աւելի թաւ է եւ գլուխին հետ սուր անկիւն կը ձեւացնէ:

Կռունկին կտուցը աւելի կարճ է արագիլի կտուցէն:

Կռունկին պոչը յարաբերաբար աւելի նուրբ է, մինչ արագիլինը աւելի թաւ է:

Երկուքն ալ բարձրասրուն են (chassier, wader), արագիլին սրունքը հաւանաբար քիչ մը աւելի երկար է, քանի ան ճահիճներու մէջ արածելու հակամէտ է:

Կռունկին մէջ իշխողը սեւ գոյնն է՝ սպիտակ նախշերով, մինչ արագիլին մէջ կ'իշխէ սպիտակը՝



սեւ նախշերով: Այսուհանդերձ գոյութիւն ունին սպիտակ կռունկի տեսակն ու սեւ արագիլի տեսակը եւս:

Եւ վերջապէս կռունկը հողին վրայ կը դնէ իր բոյնը եւ կը թխսէ ձուերը, մինչ արագիլը բարձունքներ կը փնտռէ՝ բարդի, աշտարակ, զանգակատուն, էլեկտրական սիւն, բուխարիկ ու ծխնելոյզ, երբեմն մինչեւ իսկ բարձրաբերձ սուր ժայռերը:

Արագիլը մարդամօտ է. բակիդ բարդիին կամ մօտակայ զանգակատան վրայ բոյն դրած արագիլը չի վարանիր բակդ իջնելու, փոքրիկներուն հետ խաղալու, մինչեւ սենեակները տանտիկինին հետ ելեւմուտ ընելու եւ օգտուելու անոր համեղ պատառներէն: Կռունկը այս մտերմութիւնը չունի:

Ըստ այնմ հաւանաբար ոչ մէկ երկիր ու ոչ մէկ ժողովուրդ այնքան կապուած է իր արագիլներուն, այնքան սէր ու գուրգուրանք ցոյց կու տայ անոնց հանդէպ, որքան Հայաստանն է ու հայն է:

Երկուքն ալ գաղթող եղած են. վերջին տարիներուն Արարատեան դաշտի ձկնարաններու հայթայթած կերը կը մղէ, որ երբեմն ձմեռեն Հայաստանի մէջ:

Արագիլներուն թիւը կը պահէ որոշ կայունութիւն մը, մինչ կռունկներունը նահանջի մէջ է:

***

Չես գիտեր ինչու, հայ պանդուխտը օտարութեան մէջ շատ աւելի կռունկին վստահած է իր սրտին գաղտնիքը, կարօտն ու ցաւը: Առ այդ ալ ան կը թախանձէ կռունկէն, որ չաճապարէ, քիչ մը աւելի մնայ իր հետ ու մտիկ ընէ զինք:



Մի՛ վազեր, երամիդ շուտով
կու հասնիս, Կանչէ՛, կռունկ,
կանչէ՛, քանի արեւ է,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն
խապրիկ մը չունի՞ս: Աշնան
կ'երթաս երկիր, եարիս բարեւէ:
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան,
արե՛ւ է,
Մ՛խ, եարիս բարեւէ՛...

Արմենակ Եղիայեան,
Լիբանան
armenag@gmail.com



ԱՎԵՏԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ
8 տ.



ՄԱՐՏՈՒՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
7 տ.



ԱՐՍԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ
7 տ.



ԱՐՓԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
8 տ.

Արագածոտնի մարզի Իրինդ գյուղի նկարչական խմբակի սաները

Ղեկավար՝ ՄԿՐՏԻՉ ՀՈՎՍԵՓՅԱՆ



ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ
7 տ.



ԿԱՐԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
7 տ.



ՄԱՔՍԻՄ ԻԲՈՅԱՆ
8 տ.



ՄԱՐԻԱՄ ՄՈՒՐԱԴՅԱՆ
8 տ.



ԱՐՏԱԿ ՀԵՓՈՅԱՆ
9 տ.



ԷԴԳԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ
10 տ.



ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

ՎԱՐԴԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

9-ամյա հայ տղան՝ **Վարդանը**, նվաճել է **Արարատը** և դարձել պատմության մեջ ամենափոքր լեռնագնացը, ով բարձրացել է բիբլիական գագաթը: Արշավախմբի 29 մասնակցից քսանը 9-19 տարեկան երեխաներ և պատանիներ են եղել:



ՄԵՆՈՒԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻԴԵ-ն հայ շախմատիստներ Մենուա Հակոբյանին 17 տարեկան և Տիգրան Համբարձումյանին 13 տարեկան շնորհել է ՖԻԴԵ-ի վարպետի կոչում:




Մենուայի ներկայիս վարկանիշը **2387** է, Տիգրանի վարկանիշը՝ **2351**:

ԲԱՌԱՇՂԹԱ

Բառաշղթան ճիշտ լրացնելու դեպքում կկարդաք ամենահայտնի ասացվածքներից մեկը:

Հարցերի վերջում նշված թիվը ցույց է տալիս պատասխանի տառաշարի մեջ եղած տառի համարը:

1. Մեգ, մշուշ - 2
2. Ծովային փոխադրամիջոց - 3
3. Աղոթատեղի - 2
4. Զանգված, կշիռ - 3
5. Սեղանի խաղ - 3
6. Թռչունների երամ - 2
7. Նույն խաղի հնարավոր ավարտը - 3
8. Ցերեկ - 2
9. Բառի հատված - 3
10. Շաղկապ - 2
11. Մարմնամաս - 2
12. Քնքուշ - 2
13. Դաժան - 4
14. Հսկա - 2



Բառաշղթայի
պատասխանը

վտոսի ոտ ‘վտոռվշո ԻՍ
ղոտվտ ‘տվվժ ‘ժվժսղ ‘ղոհյր
‘յոռհ ‘հղղոհ ‘իվտ ‘տոյր ‘յռվոտ
‘տոյռվոշ ‘շոձ ‘ձղոհ ‘իող ‘ղսՁյ

Աղբյուր

Մանկապատանեկան ամսագիր

www.aghbyur.com



ՆԱՐԵԿԱՑԻ
ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

www.naregatsi.org